Հարկ է մաքրել և ազատել սիրտը նախանձի ժանգէն, որպէսզի հոգիին արտին մէջ կարենան աճիլ և դէպի արև բարձրանալ ոսկի հասկերը սուրբ զգացումներուն, արդար մտածումներուն և սիրոյ գործերուն։ Հսկեցէք և արթուն մնացէք մանաւանդ, որ սէրը չցամքի։ Սէրը սրբողն ու սրբացնողն է մեր սրբութիւնը։

Եղբայրներ Մեր ի Քրիստոս, ճշմարտապէս սիրենք զիրար, սիրենք մեր եկեղեցին, սիրենք մեր հաւատացեալները։ Մարդիկ երբ բան մը միատեղ կը սիրեն, զիրար ալ կը սիրեն։ Ով որ կը նախանձի և կ'ատէ իր հոգեւոր եղբայրը, այդ նշան է, որ ան չի սիրեր Եկեղեցին։ Զիրար սիրելով, իրարու աշխատանք գնահատելով, եղբայրաբար իրարու օգնելով, պարկեշտօրէն իրարու գործակցելով, իրաւ սիրած պիտի ըլլանք մեր Եկեղեցին, մեր Ազգը և մեր սուրբ գործը։

Ո՛վ Տէր, հեռացուր մեր Եկեղեցիի սահմաններէն իշխելու մարմաջը, արծաթասիրութիւնը և նախանձը, և վերադարձուր Քու բոլոր ծառաներդ դէպի պարզ և յաւերժ ճշմարիտ պատուիրանները, որ մեզ աւետուած են մեր Նախնեաց լոյս հաւատքով։

Սիրելիք Մեր, «յիշեցէք զառաջնորդս ձեր, որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ, հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն» *(Եբր. ԺԳ. 7), և* «օրինակ լինիջիք հաւատացելոց՝ բանիւք, գնացիւք, սիրով, հաւատով եւ արբութեամբ» *(Ա. Տիմ. Դ. 12)։*

Թող Աստուած օրհնէ մեր Ս. Եկեղեցին և անոր բոլոր սպասաւորները, և զալարեցնէ անոնց գաւազանը ինչպէս Ահարոնին, «որ արձակեաց շառաւիղ եւ ծաղկեաց ծաղիկ եւ երեւեցոյց ընկոյզ» *(Թիւ ԺԷ. 8)։*

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ողջոյդ ձերում, ամէն։

Տաւաւ կոնդակս ի 14-ն յունուարի
1957 Փրկչական ամի,
եւ ի տաւմարիս Հայոց ՌՆԶ,
ի Ս. Էջմիածին, Հմր. 58

(ԿՆՔ)

ՎԱԶԳԷՆ Ա.
ԾԱՌԱՅԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

* * *

Փոխան ՍԻՈՆ-ի խօսքին, ամսագրիս այս թիւին մէջ կը հնչէ մեր սիրեցեալ եւ Վեհափառ Հայրապետի ձայնը։ Եւ որքա՜ն պատեհ ժամանակին կուգայ այդ Հայրական եւ հեղինակաւոր ձայնը։ Կը գտնուինք Մեծ պահոց ապաշխարանքի օրերու մէջ։ Եկեղեցականներս յատկապէս այս շրջանին է որ մեր հաւատացեալ հօտը կը հրաւիրենք յուղղութիւն եւ յապաշխարութիւն։ Նոյնը կ'ընէ Եկեղեցւոյ Գերագոյն Պետը բոլոր հոգեւոր պաշտօնեաներուս։ «Զի գուցէ որ այլոցն քարոզեմք՝ մեք անպիտան գտանիցիմք»։ Ընդունինք իր խօսքերը վերէն իջնող ոսկեհոս անծրեւին պէս. որովհետեւ արդարեւ «տեղ ոսկի տեղայր» Վեհափառ Հայրապետի այս սրբատառ կոնդակին մէջ։ Թող այդ պարզ բայց պայծառ պատգամները արծարծեն մեր հոգիներու մէջ «զշնորհսն Աստուծոյ որ են ի մեզ ի ձեռնադրութենէ» քահանայական սուրբ կարգի։

ԽՄԲ.

digitised by A.R.A.R.@